ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«07» 09 2016թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 74

*Ձեռնարկողը՝* *<<Հ. Արամյան>> ՍՊԸ*
*Ք. Երևան, Անդրֆեդերացիայի 1 նրբ. 14 փ.*

*Գործունեությունը՝* ***Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
*ՀՀ Արարատի մարզ*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

Հայաստան ՄՊ օրինակ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**թիվ ԲՓ 74**

**<<07>>.09 2016թ.**

**<<Հ.Արամյան>> ՍՊԸ կողմից ներկայացված Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվացքների ստեղծման աշխատաքային նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ**

| | |
|---|---|
| Պատվիրատու՝ | <<Հ.Արամյան>> ՍՊԸ |
| Նախագծող՝ | <<Հ.Արամյան>> ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Աշխատանքային նախագիծ. |
| Տեղադրման վայրը՝ | ՀՀ Արարատի մարզ |
| Գործունեության կատեգորիան | /Ա/ կատեգորիա |

Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքային նախագիծը մշակվել է համաձայն բնապահպանության նախարարության տեխնիկական բնութագրի:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատի մարզի Արարատ քաղաքի հարակից տարածքում:

Ենթակառուցվածքները նախագծված են բնապահպանական պահանջներին համապատասխան: Ընդհանուր տարածքում նախատեսվում է պահակակետ, ջրի ռեզերվուար, մեքենայի լվացման կետ, կեղտաջրերի սեպտիկ, կեղտաջրերի զտիչ, հանդերձարան սանհանգույցներով և ցնցուղարաններով, էլեկտրաենթակայան, էլեկտրական վահանակ, շվաքարան, թեքահարթակ, աղբի ընդունման կետ, տեսակավորման համար նախատեսված շինություն, աղբի հոր:

Աղբավայրերի ընդհանուր տարածքը ցանկապատված է, ցանկապատից դուրս նախագծված է կանաչապատում, կարող է իրականացվել երկու շարքով՝ մի շարք թփեր, մյուսում՝ ծառեր:

Աղբավայրի տարածքը պետք է պաշտպանված լինի մակերևույթային ջրերի ներթափանցումից, այդ նպատակով նախագծվել է շրջանցիկ /ջրահեռացման/ պատ և բետոնե առվակ:

Հակահրդեհային պահանջներից ելնելով նախատեսված է հակահրդեհային հիդրանտներ:

Ջրամատակարարումը ապահովված է Զոդ գնացող մաքուր ջրի մագիստրալից:

Վարչական-տնտեսական գոտում նախատեսված է արտաքին լուսավորություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ շինարարության ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական

անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հ.Արամյան>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման աշխատաքային նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝ Ա.Մինասյան